(1443) թուին մի ճաշոց, ՉԸ (=1459) թուին մի Յայսմաւուրք և ապա մի Աւետարան, մի երկրորդ Աւետարան ՉԺԴ (=1464) թուին, մի ընտիր ճաշոց Չ և Թ (=1460) թուին Արծկէ քաղաքում, որ գտնւում է այժմ Մ. Աթոռում (№ 895/982), և պատկերազարդուած է «անյաղթ նկարող» տէր Մինաս կրօնաւորի կողմից*։ Թումա գրիչը ՊԿ. (=1441) թուին գրում է մի Տօնացոյց և ՊՂԸ (=1449) թուին մի Աւետարան, որ Մինաս եպիսկոպոսի հետ յետոյ նուիրում են «փառաւորեալ տէր Գրիգոր կաթուղիկոսին սուրբ Էջմիածնի (Նօտարք. Փիրղ. 124/5, 162)։

ՊԶԴ (=1435) թուին գրուած № 1403/1380 ձեռագրի մէջ, 226բ. Թովմա Մեծոփեցին յիշում է մի այլ Յովհաննէս սարկաւագի (Արճիշեցի), որ «աւգնականութ՚ աշխատեցաւ ի յըղորդել գրոցս», երկու տարի նա ձրի աշխատում է Մեծոփայ վանքում և իւր ընկերակից Ստեփանոս դպրի հետ «միաբանութ՚ թը յանձն առին զգիրս և յաւարտ հանին»։ Նոյն ձեռագրի մէջ մի այլ տեղ Թովման կրկին յիշում է «զամէնան՚ լ մանկունքն զՍտփն՚ս և զՅո՚վս աշխ՚տք մեր, որ զգիրս բ՚զմ աշխ՚տութ և ահիւ (Զաղաթին) գրեցին, և զհայրն ի՚րց զկ՚պտ քՀ և զՄանգա՚սր»**։ Նոյն Յովհաննէսն (սարկաւագ Արճիշեցի) է, որ գրել է Թովմայի պատուէրով Մաշտոցի մի մասը՝ Հիւանդաց Օծման մասին, եթէ կեղծուած չէ յիշատակարանը վերջում. (Տաշեան Ցուց. 677)։ Մանգասարի որդի այս Յովհաննէսը ապագայում Արճէշ քաղաքում նշանաւոր գրիչ և գրչութեան ուսուցիչ հանդիսացաւ, որ միշտ երախտագիտութեամբ յիշում է Թովմային***։ Նա գրել է ՊԼԴ (=1445) թուին և մի աւետարան, որ այժմ սեպհականութիւն է Զմիւնիացի Սիմէոն էֆենդի Տ. Գառնիկեանի։ Իսկ Կարապետ քահանայի որդին՝ Ստեփանոս՝ գրածակից էր իւր հօրը ՊԶԶ (1437) թուին մի Յայսմաւուրքի գրութեան ժամանակ (Փիրղալ. Նօտարք. 112 և մեր յիշատակարանների ժողովածուն)։ Ոմն Յոհաննէս «ի վանքս Մեծոփայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբիս և առ ոտն մեծ

---

* Անդ. 757. (20)։ Նօտարք. 105. 132 191. 195. 219 եւ 124/5. 162.

** Անդ. 760. 763. (23. 26)։

*** Նօտարք. 185/6. 216. 230։ Նօտարք 208/9 յիշուած է ոմն Ստեփանոս վարդապետ, «փիլիսոփայ երիցական արհեստի. եւ ծայրիկ ժամատեղաց, եւ է գիտան ամենայն հին եւ նոր Կտակարանաց աստուածային գրոց գիտութեան. որ յար եւ նման է վարժապետին իւրոյ Թումայ վարդապետին»։ Կարող է այս Ստեփանոսը նոյն լինել Թովմայի աշակերտի հետ, որովհետեւ Մեծոփեցին էր ժամակարգութեան մէջ յայտնի հեղինակութիւնը։